Հրանտ Մաթևոսյան

Ի ծնե ակադեմիկոս-գրականագետ

Ի ծնե ակադեմիկոս-գրականագետ Սերգեյ Սարինյանը յոթանասունհինգ տարեկան է, ասել է թե գարնանային 1956-ին երեսուն տարեկան էր և իր լրջմիտ, չափավոր հեղափոխական չափավոր պահպանողական գործընկերների հետ, որ նույն հիանալի տարիքին էին, տանուտիրաբար ստանձնում էր մեր գրական-հասարակական մտքի նորոգումի գործը: Դրանք այն տարիներն էին, երբ խոսքը, բանը, գրականությունը, գրական-գրականագիտական միտքը հասարակության, հասարակական կյանքի մի շատ կարևոր, թերևս ամենակարևոր բաղադրիչն էին կամ հավակնում էին այդ բաղադրիչը լինել, համենայն դեպս՝ ոչ միայն հացիվ կեցոն ավետարանական պարապ արտահայտություն չէր:
Եվ ուրեմն պետք էր երկիրն օժտել լիիրավ խոսքի լիարժեք զորությամբ - մարմնին հոգի տալու, արյունափոխությամբ կյանք փրկելու չափ էական մի առաքելություն, ինչի ձախողումը բացահայտում էր երկրի փլուզման և մեր բոլորիս կործանումի ստույգ հեռապատկերը, և հաջողությունը մեր բոլորիս երկիրը, խոսքի մեր աշխարհը կենարար հարաբերությունների մեջ էր դնում երեկվա մեր իսկ աշխարհի և այլազգի մշակույթների հետ:
Եվ եթե երկիրն այնուամենայնիվ փլուզվեց - փլուզվեց ոչ Սերգեյ Սարինյանի ու իր սերնդի մեղքով և կամ՝ ամենաքիչը իրենց մեղքով: Նրա ու նրանց լուրջ, երկրի ու իրենց ժամանակի պատվախնդրությամբ պատվախնդիր հայացքի ներքո երկրի հասարակական-քաղաքական, գրական-գրականագիտական միտքը հայտաբերեց մեր այն ու այնքան կայունորեն ճշմարիտը, ինչը մեզ ազգերի ու ժողովուրդների եթե ոչ առաջին շարքերում, բայց և նույն երթի մեջ է պահում: Բռնացված, ճանապարհից բռնությամբ հանված, աղարտված, եղծված խոսքը

վրիժառու մահապարտի բնույթ է առնում. ճշմարտության ճանապարհից հանված՝ գնում կորչում է անհայտություններում և իր հետ տանում մոլորեցնում իրեն մոլորեցնողներին:
Սերգեյ Սարինյանը և իր գործը այդ մոլորյալ կորչողներից չեն: